ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ (XIX ԴԱՐԻ 80-ԱԿԱՆ ԹԹ. ՎԵՐՋ)

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ
Ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու Ս. Լ. ՀԱՄԲԱՐՅԱՆ

Հայ բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորման պրոբլեմը միշտ էլ զբաղեցրել է սովետական մասնագետներին։ Նրանք շրջանառության մեջ են դրել մեծ քանակությամբ նյութեր և կատարել գիտական արժեքավոր եզրակացություններ կապիտալիզմի զարգացման մասին հայ իրականության մեջ ընդհանրապես և Արևելյան Հայաստանում՝ մասնավորապես։ Սակայն ուսումնասիրողները սովորաբար ծանրանում են պրոլետարիատի առաջացման ու զարգացման վրա և ավելի քիչ անդրադառնում բուրժուազիայի կազմավորման հարցին։ Մինչդեռ կապիտալիզմի ծագումն ու զարգացումը բազմակողմանիորեն ցույց տալու համար այդ հարցի հանգամանորեն լուսաբանումը նույնպես կարևոր է։

Կապիտալիստական հասարակության դասակարգերի առաջացման պրոբլեմին անդրադառնալիս մասնագետները մեծ մասամբ դիմում են նահանգապետների հաշվետվություններին, որոնք պահվում են ՍՍՀՄ պետական արխիվներում կամ լույս են տեսել «Обзор Эриванской губернии», «Памятная книжка Эриванской губернии», «Обзор Карсской области», «Всеподданнейший отчет о состоянии Карсской области», «Кавказский календарь» *և այլ պաշտոնական պարբերականներում։ Բայց դրանք նախ՝ արդեն հանրահայտ են և գիտական օգտագործման տեսակետից հնացած, երկրորդ՝ ոչ միշտ են արժանահավատ, քանի որ ունեն լուրջ թերություններ ու սխալներ։ Վ. Ի. Լենինը այդ կարգի աղբյուրների մասին նշում էր, որ նրանց տվյալները «...բոլորովին պատահական են, ուստի և մեծագույն զգուշություն են պահանջում դրանք օգտագործելու համար»*[1]*։ Վ. Ի. Լենինի այդ դիտողության իրավացիությունը կարելի է ցույց տալ նաև Արևելյան Հայաստանին վերաբերող նյութերով։ 1888 թ. իր հաշվետվության մեջ Երևանի նահանգապետը հիշատակում էր նահանգի արդյունաբերության միայն 17 ճյուղ՝, մինչդեռ իրականում այդ ճյուղերի թիվն անցնում էր 50-ից*[3]*։ Նա նշում էր, որ այդ թվականին նահանգում կար 14 մետաքսափաթթման ձեռնարկություն, բայց իրականում 10-ն էր։ Նահանգապետը գրում էր, որ Երևանում չկան բամբակազտիչ ձեռնարկություններ, մինչդեռ կային 2-ը*[4]*։ Նահանգապետի տվյալներն ավելի անարժանահավատ են բանվորների թվաքանակի վերաբերյալ։ Նրա հաշվետվություններում ձեռնարկատերերը սովորաբար հաշվվում են բանվորների հետ։ Այսպես, այդ նույն տարվա հաշվետվության*

---

1 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 588։
2 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1284, ց. 223, գ. 214, թ. 70։
3 ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 254, ց. 3, գ. 2231։
4 Նույն տեղում։

մեջ նշվում է, որ Երևանի նահանգում կա 721 ջրաղաց, որտեղ բանում է 811 բանվոր[5]։ Այստեղ ջրաղացպանները բացահայտորեն համարվել են բանվորներ։ Մինչդեռ հայտնի է, որ նրանք ոչ թե բանվորներ էին, այլ հարուստներ, հաճախ նույնիսկ բուրժուաներ։

Անհրաժեշտ է շրջանառության մեջ դնել նոր, ավելի վստահելի աղբյուրներ և նրանց հիման վրա կատարել հիմնավոր եզրակացություններ։ Այդպիսի աղբյուրներից մեկն է 1888 թ. ցարական իշխանությունների կողմից կազմված Երևանի նահանգի ու Կարսի մարզի առևտրաարդյունաբերական ու արհեստավորական ձեռնարկությունների գլխավոր ստուգման մատյանը[6]։ Պաշտոնյաներն այն ստեղծեցին ցարական կառավարության պահանջով՝ առևտրաարդյունաբերական հաստատությունները հարկի տակ դնելու նպատակով։ Հասկանալի է, որ նրանք պարտավոր էին գրի առնել եղածը և ոչինչ չհորինել։ Իշխանություններն այդ տվյալների հավաքմանը ձեռնամուխ եղան դեռ 1886 թ., երբ հրատարակվեց կառավարության կանոնադրությունը առևտրական ու արդյունաբերական ձեռնարկություններից տուրքեր հավաքելու մասին։ Նույն թվականի հունիսի 8-ին Կովկասի փոխարքայության պետական ատյանից հայտնեցին Երևանի նահանգապետին, որ կազմակերպվում է պետական ատյանների հատուկ պաշտոնյաների մասնակցությամբ առևտրաարդյունաբերական և արհեստավորական ձեռնարկությունների գլխավոր ստուգում՝ Երևան, Ալեքսանդրապոլ, Նախիջևան, Օրդուբադ, Նոր Բայազետ քաղաքներում, ինչպես և Ղամարլու (Երևանի գավ.), Մեծ Ղարաքիլիսա (Ալեքսանդրապոլի գավ.), Ենգիջա և Ղուլիդեմուրջի (Շարուր-Դարալագյազի գավ.), Վաղարշապատ (Էջմիածնի գավ.), Իգդիր, Կողբ (Սուրմալուի գավ.) և Վերին Ագուլիս (Նախիջևանի գավ.) գյուղերում։ Մնացած գյուղերում ձեռնարկությունների գլխավոր ստուգումը պետք է անցկացվեր առանց նշված պաշտոնյաների՝ տեղական ուժերով։ Ուշադրություն էր հրավիրվում հատկապես այն բանի վրա, որ նյութերը պետք է հավաքվեն ամենայն բարեխղճությամբ և ուղարկվեն Թիֆլիս սեպտեմբերից ոչ ուշ։

Ղեկավարվելով վերադասի կարգադրությամբ, Երևանի նահանգապետն առաջարկեց իրեն ենթակա գավառապետներին՝ կազմակերպել պահանջվող նյութերի հավաքումը և նշված ժամանակին ուղարկել դրանք Թիֆլիս։ Գավառապետները, սակայն, այդ նյութերի հավաքումը կարողացան կազմակերպել ավելի քան երկու տարվա ընթացքում և դրանք փոխարքայություն ուղարկեցին 1888 թ. վերջին[7]։ Այդ նույն ժամանակամիջոցում համանման տվյալներ ուղարկվեցին փոխարքայություն նաև Կարսի մարզից։ Մեզ անհայտ է, թե ով էր գլխավորում Կարսի մարզի առևտրաարդյունաբերական և արհեստավորական ձեռնարկությունների վերաբերյալ նյութերի հավաքումը. գիտենք, սակայն, որ Երևանի նահանգում այն գլխավորում էր Թիֆլիսի պետական ատյանի հատուկ հանձնարարությունների ավագ պաշտոնյա, կոլեգիական խորհրդական Ն. Շադինովը։ Ուսումնասիրվում էին հետևյալ հարցերը.

---

5 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1284, ց. 223, գ. 214, թ. 70։

6 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 254, ց. 3, գ. 2231, «Журнал генеральной поверки торговых и промышленных заведений Эриванской губернии в 1888 г.», д. 2230, «Журнал генеральной поверки торговых и промышленных заведений в Карсской области в 1888 г.».

7 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, ց. 1, գ. 1027, թ. 1—17, գ. 1221, թ. 1—7։

1. Ի՞նչ ձեռնարկություն է և որտե՞ղ է գտնվում։

2. Ձեռնարկատիրոջ անուն, հայրանուն և ազգանունը։

3. Ո՞վ է ղեկավարում ձեռնարկությունը՝ տե՞րը, նրա հարակա՞տը, թե՞ գործակալը։

4. Ի՞նչ փաստաթղթով է նա տիրում ձեռնարկությանը։

5. Ձեռնարկության բնույթը, աշխատող բանվորների և աշակերտների թվաքանակը։

6. Հատուկ նշումներ, որի տակ արձանագրվում են սովորաբար ձեռնարկության տարեկան շրջանառությունը, նրա համախառն ու մաքուր եկամուտները (ռուբլիներով)։

Այս տեղեկությունները հնարավորություն են տալիս լուծելու մի շարք կարևոր խնդիրներ։

1. Կարելի է իմանալ, թե Արևելյան Հայաստանի (ավելի ճիշտ՝ Երևանի նահանգի ու Կարսի մարզի) քաղաքներում ինչ առևտրաարդյունաբերական և արհեստավորական կրպակներ ու ձեռնարկություններ կային։

2. Որքա՞ն էր նրանց թիվը։

3. Ինչպես էին նրանք տեղաբաշխված ամեն մի քաղաքում ու գավառում։

4. Ինչքան էին արդյունաբերական, առևտրական և այլ ձեռնարկություններն առանձին-առանձին։

5. Ձեռնարկատիրոջ կամ կրպակատիրոջ ազգային պատկանելությունը։

6. Ո՞ւմ համար էր արտադրում՝ պատվիրատուի՞, թե՞ շուկայի։

7. Քանի բանվոր ունեին ձեռնարկությունները կամ խանութները։

8. Քանի աշակերտ ունեին ձեռնարկությունները կամ խանութները։

9. Որքան էր այն ձեռնարկությունների թիվը, ուր աշխատում էին հինգից ավելի բանվորներ և աշակերտներ։

10. Ձեռնարկության կամ խանութի տարեկան համախառն և մաքուր եկամուտները (ռուբլիներով)։

Սակայն գլխավոր ստուգման մատյանը պարունակում էր մի շարք թերություններ։

1. Պաշտոնյաները գրի են առել գերազանցապես քաղաքների առևտրաարդյունաբերական և արհեստավորական ձեռնարկություններն ու խանութները, իսկ գյուղերինը նկատելիորեն բաց են թողել։

2. Կոնկրետ չեն հիշատակել ձեռնարկատիրոջ ազգությունը։

3. Հաճախ չեն նշում արտադրության նպատակը՝ պատվիրատուի՞, թե՞ շուկայի համար։

4. Մի շարք դեպքերում չեն գրանցվում ձեռնարկատերերի ազգանունները, նրանց ունեցած բանվորների ու աշակերտների թիվը, այլ նշում են, թե բացի հիշատակված առևտրաարդյունաբերական և արհեստավորական ձեռնարկություններից, կան նաև ուրիշները, որտեղ աշխատում են միայն տերերը, կամ դրանց հետ միասին մեկ կամ մի քանի բանվոր ու աշակերտ։ Ապա թվարկում են այդ ձեռնարկությունները, նշելով նրանց քանակը։

5. Առանձնապես անբավարար են ձեռնարկության կամ խանութի ընդհանուր շրջանառության և մաքուր եկամտի տվյալները։ Բազմաթիվ դեպքերում դրանք կամ չեն բերվում, կամ բերվում են այնպիսի անհավանական չափերով, որ վստահություն չեն ներշնչում։ Հաճախ նշվում է ձեռնարկության կամ խանութի համախառն եկամուտը, հաճախ էլ՝ միայն մաքուր եկամուտը։ Այս բաժ-

նում կան նաև այլ թերություններ։ Հավանական է, որ ցարական պաշտոնյաները գիտակցաբար են ստեղծել այդ խառնաշփոթը, որ կարողանան իրագործել իրենց հարկային սանձարձակությունները։

Այդ թերությունների մի մասը հնարավոր է հաղթահարել։ Այսպես. ձեռնարկատիրոջ կամ կրպակատիրոջ ազգությունը կարելի է որոշել նրանց ազգանուններով, անուններով ու հայրանուններով, արտադրության նպատակը՝ նրա բնույթով։ Դա հնարավոր է կատարել այն ժամանակ, եթե կոնկրետ նշվում է զբաղմունքը (օրինակ՝ զբաղվում է այս կամ այն առարկայի վերանորոգումով։ Հասկանալի է, որ դա պետք է դասել «աշխատում է պատվիրատուի համար» շարքին)։ Բազմաթիվ առևտրականների մասին նշվում է՝ «վաճառում է ինքը»։ Դա նշանակում է, որ նրանք չունեն գործակատարներ կամ բանվորներ, ուստի պետք է դասվեն բանվորներ ու աշակերտներ չունեցողների շարքին։ Ինչ վերաբերում է ձեռնարկությունների, կրպակների կամ խանութների շրջանառության համախառն ու մաքուր եկամուտների տվյալներին, ապա մենք հրաժարվեցինք նրանց մշակումից, հաշվի առնելով, որ մեծ մասամբ անվստահելի են։ Բոլոր հաշվումները կատարված են EC—10—30 էլեկտրոնային հաշվիչ մեքենայով։

Այդ հաշվումները ցույց են տալիս, որ 1888 թ. Երևանի նահանգում ու Կարսի մարզում եղել են ավելի քան 100 ճյուղի կամ տեսակի տնտեսական օբյեկտներ[8], որոնց կեսից ավելին՝ արտադրական։ Առանձնապես մեծ թիվ են կազմում կոշիկի, մաշիկի, ատաղձագործության, դերձակության, ներկագործական, գլխարկի, դարբնոցի, հացագործական, պայտարության, կառքի ու սայլի և կաթսայագործական արհեստանոցները։ Դրանք արհեստագործության այն ճյուղերն էին, որոնք իրենց արտադրանքով սպասարկում էին բնակչության անձնական ու արտադրական պահանջներին։ Թեպետև Ռուսաստանը Արևելյան Հայաստանը ներքաշում էր համառուսական տնտեսական կյանքի մեջ, դարձնում իր արդյունաբերական օջախների կցորդը, բայց և այնպես արդյունագոր-

---

8 Ահա այդ ճյուղերը. գլխարկի, կոշկակարական, դերձակության, ժամացույցի վերանորոգման, ոսկերչական, արծաթագործական, թիթեղագործական, ատաղձագործական, կաշեգործական, տկի, մոմի, անիվի պատրաստման, ճախարակագործական, մաշակարական, թաղիքագործական, քարտաշական, պղնձագործական, կլայեկագործական, բրուտագործական, ներկագործական, դինագործական, օճառագործական, ժապավենագործական, կառքի, սայլի, կազմարական, պաստառի պատրաստման, լիմոնադի, կվասի, գարեջրի արտադրության, տակառագործական, ծածկակառքի, համետագործական, օղեթորական, հայելագործական, ոստայնագործական, փականագործական, պայտագործական, ալբումինի արտադրության, աղյուսի, կաթսայագործական, ձուլման, սղոցագործական, թոկի կամ պարանի պատրաստման, բամբակաղտիչ, մետաքսափաթաթման, ապակեգործական, ներկարարական, նորաձևության արհեստանոցներ ու ձեռնարկություններ, տպարաններ, հացագործարաններ, հրուշակարաններ, դարբնոցներ, փոեր, ջրաղացներ, դինգեր, Կողբի աղահանքեր, թեյարան, սրճարան, հյուրանոց, վարսավիրանոց, պայտարան, իջևան (խան), պահեստներ, դրամափոխանակման գրասենյակ, առևտրական գրասենյակ, դեղատուն, բանկիրային գրասենյակ, բաղնիս, փոստի գրասենյակ, քաղաքային կշեռքների կետեր, ապրանքների տեղափոխման և առաքման, ապահովագրական, պետական շենքերի կառուցման կապալառության գրասենյակներ, կենդանագրական արհեստանոց, բիլյարդանոց, գինու, կոշիկի, հագուստի, մանրածախ ապրանքների, աղի, բուլկու, երշիկի, արկղերի, գալանտերեային, գրասենյակային ապրանքների, գարեջրի, մրգերի, հացահատիկի, ալյուրի, մսի, մանուֆակտուրային ապրանքների, հախճապակու, կաշվեղենի, նպարեղենի, պղնձամանների, գորգերի, մոմերի, երկաթեղենի, մորթեղենի, կարի մեքենաների, փայտի, քարածխի վաճառման խանութներ ու կրպակներ։

գործության նշված ճյուղերը դեռ շարունակում էին էական դեր խաղալ Արևելյան Հայաստանում և պատրաստել բնակչության համար ուտեստի և հագուստի բազմաթիվ առարկաներ, ինչպես նաև աշխատանքի զանազան գործիքներ։

Հաշվումներն այնուհետև ցույց են տալիս, որ բոլոր օբյեկտների թվաքանակում առաջին տեղը գրավում էին առևտրական օբյեկտները՝ խանութներն ու կրպակները։ Բավական է նշել, որ Երևանի նահանգի ու Կարսի մարզի 5858 տնտեսական օբյեկտներից 3284-ը առևտրական տիպի էին։ Առանձնապես մեծաքանակ էին տեղական հումքով առևտուր անող մանրածախ դուքանները, կրպակները, պանդոկները, բուֆետները, խորտկարանները, աղի, բուլկու և երշիկի խանութները։ Բայց հաշվումներից միաժամանակ երևում է, որ Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքում լուրջ դեր էր խաղում նաև բերովի՝ առավելապես Ռուսաստանի եվրոպական մասից ներմուծվող առարկաների առևտուրը։ Դրանցից պետք է նշել մանուֆակտուրային, գալանտերեային, գրասենյակային ապրանքները և այլն։ Միայն մանուֆակտուրային ապրանքների առևտրով զբաղվում էին 559 խանութ ու կրպակ, որոնք շրջանառության ոլորտում իրենց թվաքանակով «դուքաններից» և այլ մանրածախ խանութներից ու կրպակներից հետո գրավում էին երկրորդ տեղը։

Այդ տվյալները վերլուծելիս, չպետք է սահմանափակվել միայն արտադրական և առևտրական օբյեկտների հարաբերությունների պարզաբանման հարցերով։ Նրանց ետևում մարդիկ են կանգնած։ Ուստի անհրաժեշտ է ընդհանրացումներ կատարել հասարակական հարաբերությունների, հասարակական թեկուզ միևնույն դասակարգի, բայց տարբեր շերտերի հարաբերությունների մասին։ Նշված 5858 տնտեսական օբյեկտները պատկանում էին համարյա այդչափ մարդու (ճիշտ է, փաստաթղթում նշվում է, որ առանձին դեպքերում մի քանիսն ունեն մեկ օբյեկտ, բայց նաև ասվում է, որ միայն մեկն ունի մի քանի օբյեկտ)։ Նրանցից 4220-ը կապված էր շուկայի հետ (առևտուր էր անում, կամ արտադրում էր շուկայի համար), 149-ը բանում էր պատվիրատուի պահանջով (այսինքն՝ դեռ գտնվում էր նատուրալ տնտեսության շրջաններում), իսկ 1489-ի արտադրության նպատակը մեզ անհայտ է։ Ուրեմն, հիշատակված 5858 մարդու ճնշող մեծամասնությունը արդեն ներքաշված էր շուկայական հարաբերությունների մեջ և ըստ էության կազմում էր բուրժուազիայի դասակարգը։ Բայց բուրժուազիան, ինչպես հայտնի է, լինում է արդյունաբերական, առևտրական և վաշխառուական։ Մեր նյութերը թույլ չեն տալիս որոշելու վաշխառուական բուրժուազիայի թիվը, նրանք հնարավորություն են տալիս իմանալու արդյունաբերական և առևտրական բուրժուազիայի քանակը։ Հաշվումներից երևում է, որ 5858 մարդուց 3284-ը հաստատված էր առևտրական, իսկ մյուսները՝ այլ ոլորտներում։ Դա նշանակում է, որ Արևելյան Հայաստանում XIX դարի 80-ական թթ. վերջերին առևտրական բուրժուազիան քանակապես գերակշռում էր արդյունաբերական բուրժուազիայից։ Հաշվումները այնուհետև ցույց են տալիս, որ բուրժուազիայի մեծ մասը զբաղվում էր տեղական, իսկ մյուսը՝ առավելապես ռուսական ապրանքների վաճառքով։ Հետևաբար, Արևելյան Հայաստանի առևտրական բուրժուազիան կապված էր գերազանցապես տեղական արդյունաբերության հետ։

Անցնենք այժմ այն հարցին, թե որտեղ էր կազմավորվում Արևելյան

Հայաստանի բուրժուազիան։ Նշված 5858 տնտեսական օբյեկտներից 3720-ը գտնվում էր քաղաքներում, իսկ մնացածը՝ գավառներում։ Դա նշանակում է, որ բուրժուազիան կազմավորվում էր հիմնականում քաղաքներում, առավելապես Երևանում և Ալեքսանդրապոլում (3720 օբյեկտներից 1246-ը գտնվում էր Երևանում, իսկ 1190-ը՝ Ալեքսանդրապոլում)։

Հաշվումները[9] հնարավորություն են տալիս որոշելու նաև Արևելյան Հայաստանի ձեռնարկատերերի ազգային կազմը։ Պարզվում է, որ Երևանի նահանգում ու Կարսի մարզում եղած 5858 տնտեսական օբյեկտներից 2906-ը պատկանում էր հայերին, 1405-ը՝ ադրբեջանցիներին և այլ մահմեդականներին, 71-ը՝ ռուսներին և այլ եվրոպացիներին, 11-ը՝ վրացիներին, իսկ 1465-ի ազգային պատկանելությունը չկարողացանք որոշել։ Այդ տվյալները ցույց են տալիս, որ Արևելյան Հայաստանի ձեռնարկատերերի մեծ մասը բաղկացած էր հայերից։

1888 թ. Երևանի նահանգում ու Կարսի մարզում անցկացրած առևտրաարդյունաբերական ձեռնարկությունների գլխավոր ստուգման մատյանները կարևոր սկզբնաղբյուրներ են նաև Արևելյան Հայաստանի պրոլետարիատի սկզբնավորման ուսումնասիրման համար։ Նրանք ցույց են տալիս, որ արձանագրված բոլոր 5858 տնտեսական օբյեկտներից 3323-ը բանվոր չունեն։ Դրանք գերազանցապես առևտրական ու մասամբ արհեստավորական կըրպակներ էին, ուր աշխատում էին միայն նրանց տերերը, սպասարկելով կա՛մ պատվիրատուին, կա՛մ շուկային։ 836 օբյեկտ ունեն մեկական, 105-ը՝ 2-ական, 58-ը՝ 3-ական, 39-ը՝ 4-ական, 4-ը՝ 5-ական, 14-ը՝ 6—9-ական, 6-ը՝ 10-ական և ավելի բանվոր, իսկ 1473 օբյեկտների ունեցած կամ չունեցած բանվորների թիվը անհայտ է։ Աղբյուրն այդ մասին ուղղակի լռում է։ Ամփոփելով այդ տվյալները, տեսնում ենք, որ 5858 օբյեկտներից 3323-ը բանվոր չունեն, 1473-ի բանվորների թիվն անհայտ է, իսկ 1062-ը ունեն շուրջ 1600 բանվոր, կամ յուրաքանչյուր միջին հաշվով 1,5 բանվոր։ Այդ 1600 բանվորներից 1244-ը զբաղված էր արտադրության, իսկ մնացածը՝ գերազանցապես սպասարկման ոլորտում։ Բանվորների ու աշակերտների աշխատանքը համեմատաբար շատ էր տարածված կոշկակարական, դերձակության, ոսկերչական, արծաթագործական, ատաղձագործական, կաշեգործական, ալբումինի արհեստանոցներում և մանուֆակտուրային ապրանքների առևտրական խանութներում։

Հետաքրքրական են նաև աշակերտության վերաբերյալ տվյալները։ Դրանք ցույց են տալիս, որ 5858 օբյեկտներից 4290-ը չուներ ոչ մի աշակերտ, 1483-ի ունեցածների թիվն անհայտ է, իսկ 85-ը ունեին 105 աշակերտ, ընդ որում 81-ը՝ մեկական, 2-ը՝ 2-ական, 2-ը՝ 10-ական։

Այս տվյալները սպառիչ պատասխան չեն տալիս Արևելյան Հայաստանի բանվորների ու աշակերտների քանակի մասին։ Նրանց հիման վրա կարելի է միայն եզրակացնել, որ Երևանի նահանգի ու Կարսի մարզի տնտեսական օբյեկտների մի մասում աշխատում էին շուրջ 1700 բանվոր ու աշակերտ։ Տվյալները չեն պատասխանում նաև այն հարցին, թե այդ բանվորներն ու աշակերտները մշտակա՞ն էին, թե՞ սեզոնային։ Բայց նյութերի մանրակրկիտ

---

9 Աղյուսակը, որի մեջ հանգամանորեն ամփոփված են այդ բոլոր հաշվումները, կհրապարակենք մի այլ առիթով։

ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ նրանք մշտական էին։ Այդպիսի եզրակացության համար հիմք է ծառայում այն փաստը, որ ցուցակներում չկա ոչ մի տեղեկություն սեզոնային ձեռնարկությունների բանվորների կամ աշակերտների թվաքանակի մասին։ Մինչդեռ հայտնի է, որ նրանց մի մասը (բամբակազտիչ, օղեթորման, գինեգործական և այլն) ուներ որոշ թվով գործավորներ։ Արևելյան Հայաստանի պրոլետարիատի թվաքանակի հարցը լիակատար լուծելու համար անհրաժեշտ է շարունակել պրպտումները, ուսումնասիրել նաև մյուս տարիների հարկային մատյանները, ի հայտ բերել և շրջանառության մեջ դնել նոր նյութեր։

Բերված տվյալների վերլուծումը ցույց է տալիս, որ Արևելյան Հայաստանի արդյունաբերության մեջ առաջանում էին կապիտալիստական հարաբերություններ։ Սկզբնավորվում, ձևավորվում էին մի կողմից բուրժուազիայի, մյուս կողմից՝ պրոլետարիատի դասակարգերը։ Կապիտալիստական հարաբերությունների առաջացման յուրահատկություններից մեկն այն էր, որ ինչպես Երևանի նահանգում, այնպես էլ Կարսի մարզում արդյունաբերության մեջ տիրապետում էր համարյա բացառապես մանր բուրժուազիան։ Առևտրաարդյունաբերական խանութների ու արհեստանոցների տերերը, ճնշող մեծամասնությամբ, ներքաշվել էին շուկայական հարաբերությունների մեջ և դարձել մանր ապրանք արտադրողներ կամ վաճառողներ։ Սրանց մի մասը դեռ չուներ, իսկ մյուս մասն արդեն ուներ գործավորներ՝ բանվորներ։ Բայց նրանց բանվորների ու աշակերտների թվաքանակը դեռ չնչին էր՝ 1—3, իսկ որոշ դեպքերում՝ նաև 4—5 հոգի։ Այդ գործավորների հետ միաժամանակ աշխատանքային պրոցեսներին սովորաբար մասնակցում էին նաև իրենք՝ արհեստանոցի տերերը։ Դա շատ բնորոշ էր մանր ապրանքային արտադրության համար։ Վ. Ի. Լենինը, խոսելով կապիտալիստական հարաբերությունների ձևավորման մասին ռուսական արդյունաբերության մեջ, համամիտ էր այն կարծիքին, որ «երկու երեք գործավորն այնքան փոքր ավելցուկ են տալիս տնտեսատիրոջը, որ նա աշխատում է նրանց հետ միասին... Հինգ գործավորն այնքան է տալիս տնտեսատիրոջը, որ մի որոշ աստիճանի արդեն իրեն ազատում է ձեռքի աշխատանքից»[10]։

Անշուշտ, Արևելյան Հայաստանում կային ձեռնարկություններ, որոնք բանեցնում էին 5 և ավելի բանվորներ. Գլխավոր ստուգման մատյանը ցույց է տալիս, որ Երևանի 11 հացագործարաններից յուրաքանչյուրում աշխատում էին 6-ական բանվոր. դերձակության մեկ արհեստանոցում՝ 7 բանվոր, կաշեգործական մեկ ձեռնարկությունում՝ 8 բանվոր, Ալեքսանդրապոլի ալբումինի ֆաբրիկայում՝ 40 բանվոր, Ներքին Ագուլիսի մետաքսափաթթման գործարանում՝ 20 բանվոր և 15 աշակերտ, Ջանանաբի մետաքսափաթթման գործարաններից 2-ում՝ 15-ական, իսկ մեկում՝ 22 բանվոր և այլն։ Բայց այդ ձեռնարկատերերի միայն փոքր մասը կարելի է դասել միջին բուրժուազիայի շարքը։ Ըստ էության Երևանի նահանգի և Կարսի մարզի արդյունաբերության մեջ տակավին չկար ո՛չ միջին և ո՛չ էլ խոշոր բուրժուազիա։

Արևելյան Հայաստանի արդյունաբերական պրոլետարիատը դեռ սակավաթիվ էր և ավելի քիչ, քան մանր բուրժուազիան։ Եվ դա միանգամայն օրինաչափ էր. պրոլետարիատը չէր կարող լինել ստվարաթիվ այնտեղ, որտեղ

10 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 439։

իշխում էր մանր բուրժուազիան։ Շատ դեպքերում բանվորները համարյա չէին տարբերվում նախկին համքարական ենթավարպետներից կամ աշակերտներից։ Այդպիսի վիճակ կարող էր պահպանվել ոչ միայն մանր ապրանքային, այլև մանուֆակտուրային ձեռնարկություններում։ «Կախում ունեցող բանվորների մասսայի կողքին,— գրում է Լենինը,— մանուֆակտուրայի ժամանակ շարունակում է միշտ պահպանվել quasi*—ինքնուրույն արտադրողների ավելի կամ պակաս չափով նկատելի թիվը*[11]։

Արդյունաբերական պրոլետարիատի որոշ դանդվածներ դեռ կապված էին հողագործության, գյուղի հետ։ Այդ բոլորը բնորոշ էր նոր սաղմնավորվող և կազմավորվող պրոլետարիատի համար։ Միայն հետագայում. երբ սոցիալ-տնտեսական մի շարք գործոնների հետևանքով տնտեսապես քայքայվում են մանրբուրժուական աշխատավորական դանդվածները ու բռնում քաղաքի ճամփան, պրոլետարիատը ստվարանում է. ազատվում միջնադարյան կապանքներից և դառնում ինքնուրույն դասակարգ։

К ВОПРОСУ О ФОРМИРОВАНИИ БУРЖУАЗИИ И ПРОЛЕТАРИАТА В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ (КОНЕЦ 80-х ГОДОВ XIX в.)

Доктор историч. наук А. С. АМБАРЯН,
Кандидат физ.-мат. наук С. Л. АМБАРЯН,

(Резюме)

В статье по данным журналов генеральной поверки торговых и промышленных заведений в Эриванской губернии и Карсской области рассматривается формирование буржуазии и пролетариата в Восточной Армении к концу 80-х годов XIX в. Подсчеты, сделанные на электронно-вычислительной машине ЕС-10-30, показывают, что в 1888 г. в Эриванской губернии и Карсской области было 5858 торгово-промышленных заведений, из них 3284—торговых. Торговая буржуазия по численности превышала промышленную. Подавляющее большинство торговцев и промышленников или не содержало рабочих (но было связано с рынком) или нанимало не более 4-х. Таким образом, в Восточной Армении преобладала мелкая буржуазия. Рабочих было мало, даже меньше, чем буржуазии. Это понятно: число рабочих не может быть велико в стране, где господствует мелкая буржуазия. Еще меньше было учеников. Приведенные в статье данные все же свидетельствуют о том, что в конце 80-х годов XIX в. в промышленности Восточной Армении шел процесс формирования классов капиталистического общества.

---

11 *Նույն տեղում, էջ 543։*